ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

10 Նոյեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

160
(2826)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԺՊ-Ն

Շավարշ Գրիգորյանը 2023 թվականի ապրիլի 17-ին նշանակվել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար: Գրիգորյանը Արսեն Թորոսյանի նախարար աշխատած ժամանակահատվածում զբաղեցրել է առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը: Նա աշխատանքից ազատվել է 2020թ. դեկտեմբերին, իսկ 2021թ. հոկտեմբերից մինչեւ 2022թ. ապրիլի 28-ը զբաղեցրել է ՊԵԿ նախագահի խորհրդականի պաշտոնը: Հավելենք նաեւ, որ առողջապահության նախկին նախարար, այժմ ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյանի ընտանիքը ձկնաբուծական բիզնես է սկսել Արագածոտնի մարզում, «Ֆիշ ֆարմ մենեջմենթ» ՍՊԸ-ի բաժնետերերից մեկը թերեւս պաշտոնյայի հայրն է: «Ֆիշ ֆարմ մենեջմենթ» ՍՊ ընկերության հիմնադիրները եղել են Շավարշ Գրիգորյանը եւ նրա կինը՝Էդիտա Գուրջոյանը: Մինչ նախարարի տեղակալ նշանակվելը Շավարշ Գրիգորյանը եղել է «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար, ինչպես նաեւ զբաղեցրել է Սեւանի հոգեկան առողջության պահպանման կենտրոնի տնօրենի պաշտոնը: Նա եղել է նաեւ առողջապահության նախկին նախարար Լեւոն Ալթունյանի օգնականը: Ըստ մեր տեղեկությունների՝Գրիգորյանին են պատկանում մի քանի ձկնաբուծական ընկերություններ եւս, սակայն նրա հայտարարագրում որեւէ տող այդ կազմակերպություններից ստացված եկամուտների մասին չկա: Ավելին՝Շավարշ Գրիգորյանի՝2022 թվականի տարեկան հայտարարագրում եկամուտները կազմել են 214 մլն 584 հազար դրամ: Եկամուտների գրեթե 74 մլն դրամը վարկ է «Մելլաթ բանկ» ՓԲԸ-ից եւ «ՎՏԲ-Հայաստան» բանկից: Շավարշ Գրիգորյանը 142 մլն 740 հազար դրամ ստացել է գույքի օտարումից, սակայն մութ է մնում այն կետը, թե այդ ինչ թանկարժեք գույք է ունեցել եւ վաճառել նախկին փոխնախարարը: Փաստն այն է, որ Գրիգորյանը, հանդիսանալով մի շարք ձկնաբուծական ընկերությունների համասեփականատեր, որեւէ եկամուտ չի ստացել այդ ընկերություններից, ինչը կասկածելի է: Նա 2021 թվականից հանդիսանում է «ՄԱԿ ՖԻՇ» ՍՊԸ-ի 8.34% բաժնետեր եւ «Հայնավթ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր եւ այս ընկերությունների շրջանառությունից որեւէ ֆինանսական եկամուտ չի ստացել: Գրիգորյանը հայտարարագրել է 1 բնակարան Երեւանի բազմաբնակարան շենքերից մեկում, որը ձեռք է բերել 2023 թվականի մարտի 17-ին: Հայտարարագրից հասկանում ենք, որ բնակարանը ձեռք է բերվել հիփոթեքով, որի մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա վերջում կազմել է 58 մլն 078 հազար դրամ: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 20 մլն 267 հազար դրամ, 400 ԱՄՆ դոլար եւ 657 եվրո: Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը հայտարարագրել է 2 մեքենա, որից մեկը բեռնատար՝KRAZ մակնիշի, ձեռք բերված 2000 թվականին, եւ 2022 թվականին ձեռք բերված՝2021 թվականի արտադրության VOLKSWAGEN մակնիշի: Նրան է վստահված իրականացնել քաղաքապետարանի աշխատակազմի գործունեության կազմակերպումն ու ղեկավարումը, ինչպես նաեւ համակարգել եւ վերահսկել քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, ֆինանսական, գնումների, եկամուտների հաշվառման եւ գանձման, կազմակերպական, մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունների, քարտուղարության, մատակարարման եւ տեխնիկական սպասարկման ծառայության եւ առաջին եւ զորակոչային հարցերի կազմակերպման բաժնի աշխատանքները: Հավելենք նաեւ, որ Շավարշ Գրիգորյանը հանդիսանում է արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի մտերիմ ընկերը, եւ վերջին գործակարգավարական նիստի ընթացքում քաղաքապետ Ավինյանը վրդովված նշեց, որ Տորք Անգեղի այգում դատարանը ստիպում է տալ շինթույլտվություն, ինչը զայրացրել էր Ավինյանին: Նա հրահանգել է Շավարշ Գրիգորյանին զբաղվել այդ հարցով. վերջինս, ըստ երեւույթին, հարցերը պետք է կարգավորի նախարար Մինասյանի հետ:



Երեւանի ավագանու ընտրություններում կրած պարտությունից հետո ՔՊ-ում կյանքն այլեւս խաղաղ ու հանգիստ չէ: Թեեւ արդեն մեկ ամիս է անցել, ու մի կերպ կարողացել են իրենց թեկնածուին քաղաքապետ դարձնել, բայց մինչ օրս իշխանությունը մեղավորների փնտրտուքներով է զբաղված: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանականների մեծ մասը պարտության մեղավոր համարում է կարկառուն ՔՊ-ական Արմեն Փամբուխչյանին, որն այժմ փոխքաղաքապետի պաշտոնն է զբաղեցնում: Բանն այն է, որ ընտրությունների ժամանակ նա է գլխավորել ՔՊ նախընտրական շտաբը, ու հենց նրա վրա է եղել տարբեր նախկին-ներկա քաղաքական ֆիգուրների ու թաղային հեղինակությունների հետ հանդիպելու պարտականությունը, բայց, ինչպես ՔՊ-ականներն են պատմում, նա մատը մատին չի տվել, դրա համար էլ տապալել են ընտրությունները: Ահա այս պատճառով էլ ընտրություններից հետո ՔՊ-ականների ու Արմեն Փամբուխչյանի հարաբերությունները լարված են: Չնայած դժգոհություններին՝ Արմեն Փամբուխչյանն էլ իր, այսպես ասած, հակափաստարկներն ունի. նա էլ թիմակիցների մոտ բացահայտ հայտարարել է, որ միայն ինքը չի պարտվել, ապա հավելել, որ «եթե Կոնջորյանի թեկնածությունն առաջադրեինք, այսպես չէր լինի»: Կարճ ասած, ՔՊ-ում մինչ օրս դեռ վերլուծում են իրենց ձախողման հարցը ու մեղավորներ փնտրում:




Բենզինի աճող գնին զուգահեռ՝ հեղուկ գազի գներն էլ են բարձրանում: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն են ահազանգում բազմաթիվ վարորդներ այն մտահոգությամբ, որ ոչ միայն հեղուկ գազի գինն է բարձրացել, այլ նաեւ որակն է ընկել, նախկինը չէ: Պարզվում է, որ հեղուկ գազի կալորիականությունը 25%-ով նվազել է: Եթե նախկինում հնարավոր էր 5000 դրամի լցնել 25 լիտր հեղուկ գազ եւ երեւանյան փողոցներով վարել մոտ 200 կմ 2-2.5լ/աշխատանքային շարժիչի դեպքում, այսօր արդեն նույն 25 լիտրով նույն 2-2.5լ/աշխատանքային շարժիչի դեպքում նույն երեւանյան փողոցներով հնարավոր է լինում վարել 145-150 կմ, այդ էլ՝ այն դեպքում, որ հետազոտություն անցած մեքենաները չունեն որեւէ խնդիր, ըստ այդմ՝ վառելիքի կորուստ: Այն, որ ստացվում է՝ հեղուկ գազի մեկ լիտրի արժեքը այսօր 200 դրամ է՝ նախկին 140-ի համեմատությամբ, դա հարցի ողբերգականության միայն մի հատվածն է. գների բարձրացմանը զուգահեռ՝ նվազում է նաեւ կալորիականությունը՝ վնասելով միջին վիճակագրական եւ դրանից էլ նույնիսկ ցածր աշխատավարձ ստացող վարորդի վճարունակությանը: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հետ՝ պարզելու, թե ինչն է նման խայտառակ վիճակի պատճառը, եւ թե արդյոք որեւէ քայլ ձեռնարկվում է այդ ուղղությամբ, սակայն մեր զանգերն այդպես էլ անպատասխան մնացին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Երկուշաբթի՝ նոյեմբերի 6-ին՝ 44-օրյա պատերազմի 3-րդ տարելիցից օրեր առաջ, Ազգային ժողովում հանդիպում է եղել հանձնաժողովների նախագահների եւ անհետ կորածների ծնողների հետ: Քննարկվել են մի շարք հարցեր՝ անհետ կորած զինծառայողներին գտնելու, որոնողական աշխատանքներ կատարելու վերաբերյալ: Ծնողները հստակ պահանջներ են ներկայացրել, սակայն որեւէ արդյունավետ վերջնակետի չեն հանգել: Լարված իրավիճակ եւ մթնոլորտ է եղել: Ազգային ժողով մտել են 10 ծնող, եւ մտնելուց առաջ էլ նրանց միջեւ լարված իրավիճակ եւ լեզվակռիվներ են եղել, ինչպես հանդիպման ընթացքում: Ծնողներից ոմանք նույնիսկ որոշում են կայացրել հացադուլ հայտարարել:

ԶՐՈՒՅՑ

# ԱՐՑԱԽԻ ԿՈՐՍՏԻ ՄԵՂԱՎՈՐՆ Ո՞Վ Է

**Արցախի ԱԺ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության դատգամավոր Արամայիս Աղաբեկյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտարարել է, որ Մամվել Շահրամանյանի ընտրություններից առաջ Ադրբեջանը հստակ մեսիջ է ուղարկել, որ ռազմական ագրեսիայի է դիմելու:**

Արցախի պատգամավորը նաեւ հայտարարեց, որ ԱԺ նիստ հրավիրելու վերաբերյալ քննարկումներ կան, սակայն օրակարգի շուրջ դեռ չեն կարողանում համաձայնության գալ:

**-Պարոն Աղաբեկյան, հայ ժողովրդի 30-ամյա պայքարից հետո այսօր ունենք պատմության մեջ առաջին անգամ մի իրավիճակ, երբ ամբողջությամբ հայաթափված է Արցախը, քաղաքական ղեկավարությունը ապօրինաբար գերեվարված է Ադրբեջանի իշխանության կողմից: Արդեն անցել է այս ամենից մեկ ամիս եւ ավելի. ինչո՞ւ հասանք այս իրավիճակին՝ ըստ Ձեզ, ո՞վ էր մեղավորը:**

-Իրականում բավականին բարդ հարց եք տալիս, որովհետեւ եթե փորձենք մանրամասն նկարագրություն տալ դրան, ժամեր կարող է տեւել. ընդամենը կարող ենք ասել, որ այս իրավիճակի պատասխանատվությունն ու մեղավորությունը կոնկրետ անձերի վրա բարդելը ճիշտ չէ, այն բազմաշերտ է, եւ կարծում եմ, որ մեծամասամբ պայմանավորված է եղել հենց բանակցային գործընթացով: Անմիջապես ռազմական գործողությունների ավարտից հետո, կարծում եմ, պատմական հնարավորություններ են եղել, որոնք բաց ենք թողել: Ընդհանուր նաեւ տնտեսական, քաղաքական եւ ռազմական տեսանկյունից բավարար պաշտպանական քաղաքականություն չի վարվել:

Ամենացավալին եւ տխուրն այն է, որ ապրել են երկու տարբեր իրականություններում: Իշխանությունը, որպես այդպիսին, գնացել, բանակցել է լրիվ ուրիշ բանի մասին, եւ փակ են պահել հասարակությունից, ու հասարակության մեջ քարոզվել է լրիվ ուրիշ բան:

**-Արցախի՞ իշխանությունների մասին է խոսքը:**

-Չէ, Արցախի իշխանությունները երբեւէ բանակցելու իրավունք չեն ունեցել. խոսքը Հայաստանի Հանրապետության իշխանությունների մասին է եւ առանձնացված իշխանությունների մասին չէ, այլ փաստացի Լեւոն Տեր-Պետրոսյանից հետո, երբ որ քաղաքական գործընթացներ են տեղի ունեցել, եւ սկսվել է «ոչմիթիզականության» քաղաքականությունը վարվել, մի իրականություն ներկայացվել է հանրությանը:

Ցավոք սրտի, պաշտպանողականության գործնական քայլեր չեն կատարվել, եւ 20 թվականի պատերազմի ժամանակ ջարդվել է նաեւ տարածաշրջանում մարտունակ բանակի թեզը, եւ մենք տեսել ենք, որ երկարաժամկետ պատերազմների ժամանակ հաղթանակ գրանցելու եւ ժամանակակից պատերազմ վարելու տեսանկյունից ամենեւին էլ տարածաշրջանի մարտունակ բանակը չենք ունեցել: Սա խնդիրների փունջ է, որոնք, մենք կարծում եմ, որ ժամանակի ընթացքում քաղաքական եւ ռազմական վերլուծաբանները պետք է հստակ փաստահավաք աշխատանք կատարեն եւ ներկայացնեն, թե ինչպիսին են եղել պատճառները, ովքեր են եղել մեղավորները, եւ արդյոք հնարավոր էր խուսափել այս ամենից:

Կարծում եմ՝ ավելի գլոբալ հարց է, թե ինչ ենք անելու հետո: Համոզված եմ, որ Արցախի պատմության էջը չի փակվել, եւ դա իրենք՝ ադրբեջանցիներն են մեզ ապացուցել:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԻՐԱՎԻՃԱԿ

## Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ⇨ ԳՐՈՒՄ Է

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Իմ գործընկեր Աննա Գրիգորյանի հետ համայնքային այցի շրջանակներում հանդիպում ունեցանք Արցախից բռնի տեղահանված եւ Արտաշատ խոշորացված համայնքի Մասիս գյուղում բնակվող կանանց հետ:

Հանդիպման մասնակիցները կիսվեցին իրենց խնդիրներով, նոր կյանքի պայմաններին հարմարվելուն առնչվող կարիքներով եւ ապագայի ծրագրերով:

Արցախցի մեր քույրերին հայտնեցինք, որ իրենց սոցիալական կարիքների, փաստաթղթային խնդիրների՝ արագացված ընթացակարգով լուծման պահանջով գրություններ են ուղարկվել համապատասխան գերատեսչություններին:

Շարունակելու եմ Արցախից բռնի տեղահանված կանանց հետ հանդիպումների շարքը՝ աջակցելով նոր միջավայրում նրանց ադապտացմանը, որպես կին առաջնորդներ՝ իրենց գաղափարների իրացմանը եւ իրենց համայնքի հզորացմանը»:

## ԿՄԵԿՆԻ ԲՐՅՈՒՍԵԼ

ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը կմեկնի Բրյուսել: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ Անվտանգության խորհուրդի տարածած հաղորդագրությունից:

«ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը կմեկնի Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսել, որտեղ նոյեմբերի 10-ին կմասնակցի «Հայաստանի ռազմավարական ապագան. ՀՀ-Եվրոպա» խորագրով համաժողովին: Այցի ընթացքում ԱԽ քարտուղարը մի շարք աշխատանքային հանդիպումներ կունենա»,- ասված է հաղորդագրության մեջ:

## ԿՄԱՄՆԱԿՑԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նոյեմբերի 23-ին կմասնակցի Մինսկում կայանալիք ՀԱՊԿ գագաթնաժողովին:

«Մենք վերջերս միասին մասնակցել ենք Բիշքեկում ԱՊՀ գագաթնաժողովին: Շուտով կհանդիպենք Մինսկում Հավաքական անվտանգության խորհրդի նիստում»,- ասել է Պուտինը Աստանայում Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի հետ բանակցություններում:

## ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՄՈՏԵՆԱ՞

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Տաշքենդում կրկին խոսել է Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորումից:

Թուրքական TRT-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, անդրադառնալով Արցախը հայաթափելու Ադրբեջանի վերջին ագրեսիային, հայտարարել է, թե դրանով տարածաշրջանում մնայուն խաղաղությունը ավելի է մոտենում: «Այդ ամենը կհեշտանա, եթե Հայաստանը կատարի Ադրբեջանի հանդեպ պարտավորությունը: Շատ կարեւոր է ամենակարճ ժամկետում պահովել Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի միջեւ գիծը»,- ասել է Էրդողանը:

## ԱՌԱՆՑ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին մեկնել է Ֆրանսիա՝ մասնակցելու Փարիզի խաղաղության համաժողովին, որը տեղի կունենա նոյեմբերի 10-11-ը: Զուրաբիշվիլին կմասնակցի ֆորումի՝ «Մուլտիճգնաժամից մինչեւ մուլտիկոնֆլիկտ. ինչպես կոտրել արատավոր շրջանը» պանելային քննարկմանը: Վրաստանի նախագահի աշխատակազմից հայտնել են, որ Սալոմե Զուրաբիշվիլին կառավարությունից ուղեւորության համար համաձայնություն չի խնդրել: Կառավարությունում Զուրաբիշվիլիի այցը դեռ չեն մեկնաբանել: Հիշեցնենք, որ վերջերս իշխող կուսակցությունը փորձում էր իմպիչմենտ հայտարարել նախագահին հենց առանց կառավարության համաձայնության ուղեւորություններ իրականացնելու պատճառով: Հատկանշական է, որ արդեն Փարիզում է գտնվում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, որը նույնպես մասնակցելու է խաղաղության համաժողովին:

## ՄԻՐԶՈՅԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ողջունել է G7-ի երկրների արտաքին գործերի նախարարների հայտարարությունը, որով Ադրբեջանին կոչ է արվել լիովին կատարել միջազգային մարդասիրական իրավունքով ստանձնած իր պարտավորությունները: Արարատ Միրզոյանը X-ի իր միկրոբլոգում գրել է. «Ողջունելով G7-ի հայտարարությունը՝ ընդգծում ենք, որ միջազգային վճռական քայլերը եւ ներգրավված բոլոր կողմերի հստակ հրապարակային պարտավորություններն առաջնային նշանակություն ունեն Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի կարիքների բավարարման համար՝Գրանադայի հայտարարության համաձայն: Հայաստանն ունի այդպիսի պարտավորություն»:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝Տոկիոյում կայացած G7-ի երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ քննարկվել են նաեւ Լեռնային Ղարաբաղից հայերի բռնի տեղահանման հետեւանքները: Արտգործնախարարները նաեւ հրապարակել են հայտարարություն:

«Մենք լրջորեն մտահոգված ենք Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական գործողությունից հետո Լեռնային Ղարաբաղից հայերի տեղահանման հումանիտար հետեւանքներով: Մենք կոչ ենք անում Ադրբեջանին լիովին կատարել միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ իր պարտավորությունները եւ ողջունում ենք տեղահանվածների անհետաձգելի մարդասիրական կարիքները բավարարելու միջազգային ջանքերը: Մենք ընդգծում ենք մեր աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն եւ տեւական խաղաղության խթանմանը՝հիմնված ուժի չկիրառման, ինքնիշխանության հարգանքի, սահմանների անխախտելիության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների վրա»,- ասված է հայտարարության մեջ:

## ԹՈՒՐՔԻԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ Է

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հաստատել է, որ Թուրքիան պատրաստ է հանդես գալ որպես երաշխավոր երկիր Գազայի հատվածի ճգնաժամի կարգավորման հարցում: Այս մասին հայտարարել է Թուրքիայի ղեկավարի վարչակազմը:

«Նախագահ Էրդողանը նշել է, որ Թուրքիան պատրաստ է իր ներդրումն ունենալ խնդրի կարգավորման գործընթացում՝ստանձնելով երաշխավորի պատասխանատվությունը: Իսլամական աշխարհը պետք է միասնական դիրքորոշում ընդունի եւ մեծացնի ճնշումն Իսրայելի վրա»,- ասվում է Թուրքիայի նախագահի վարչակազմի հայտարարության մեջ:

Հստակեցվում է, որ Տաշքենդում Իրանի նախագահ Էբրահիմ Ռաիսիի հետ հանդիպման ժամանակ Էրդողանը հայտարարել է նաեւ, որ իսլամական աշխարհը պետք է միասնական դիրքորոշվի եւ ճնշում գործադրի Իսրայելի վրա: Թուրքիայի նախագահը նաեւ հայտարարել է, որ նոյեմբերի 15-ին Ստամբուլում նախատեսվում է միջազգային հանդիպում Գազայի հատվածում տիրող իրավիճակի վերաբերյալ:

ՄԵԿՆԱԲԱՆԵՑ

# ՌԴ-Ն ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՆ»

**«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՌԴ ԱԳՆ դաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան անդրադարձել է Հայաստանի ներկայացրած «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը:**

«Երեւանի նախաձեռնությունը շատ հարցերում համահունչ է այն ծրագրերին, որոնք վերջին տարիներին քննարկվում են Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի փոխվարչապետների համանախագահությամբ՝ եռակողմ աշխատանքային խմբի շրջանակում: Այն զբաղվում է տարածաշրջանում տնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակմամբ եւ, մեր խորին համոզմամբ, կարեւորագույն դեր է խաղում Բաքվի եւ Երեւանի հարաբերությունների կարգավորման գործընթացում, նպաստում է ամբողջ Հարավային Կովկասի կայունացմանը, տարանցիկ եւ լոգիստիկ ներուժի բացահայտմանը: Երեք երկրների ղեկավարները այդ եռակողմ աշխատանքային խմբի ստեղծման որոշումը կայացրել են Ղարաբաղում մարտական գործողությունների ավարտից ընդամենը մի քանի ամիս անց: Արդեն խմբի 12 նիստ է անցկացվել, մեծ աշխատանք է կատարվել տարածաշրջանային լոգիստիկ ենթակառուցվածքի ընթացիկ իրավիճակի գնահատման մասով, երկաթուղային, ավտոմոբիլային հաղորդակցության օպտիմալ ծրագրերի ընտրության հարցում: Հաջողվել է սերտորեն մոտենալ բոլոր կողմերի համար շահավետ փաթեթային լուծման:

Անդրադառնալով վերջին՝ Զախարովան նշել է, որ ցավոք, այդ հարցերում վերջակետ դնել դեռեւս չի հաջողվել:

«Ինչ-որ մեկը բավարար քաղաքական կամք չունի դա անելու համար, եւ դա մենք չենք: Ինչպես նախկինում, մենք պատրաստ ենք ցուցաբերել անհրաժեշտ աջակցությունը տարածաշրջանի հաղորդակցությունների ապաշրջափակման գործընթացներին, այդ թվում՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին, 2021 թ. հունվարի 11-ին բարձրագույն մակարդակով ձեռք բերված եռակողմ հայտարարությունների հիման վրա: Այնտեղ հստակ նշված է Ռուսաստանի դերակատարումը»,- ընդգծել է Զախարովան:

Նա անդրադարձել է նաեւ Հայաստանով անցնող տարածաշրջանային եւ միջազգային կոմունիկացիաների, ինչպես նաեւ դրանցով ապրանքների, տրանսպորտային միջոցների եւ մարդկանց անցման անվտանգությունն ապահովելու համար ՀՀ ԱԱԾ-ի կազմում ստեղծված ստորաբաժանմանը:

«Ցանկանում եմ հիշեցնել, որ վերոնշյալ հայտարարությունների համաձայն՝ Ադրբեջանի եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացնեն ՌԴ ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները»,- ասել է ՌԴ ԱԳՆ խոսնակը: Նրա խոսքով՝ տարածաշրջանի երկրների համար փոխադարձ ընդունելի լուծումներ գտնելու լավ հարթակ է տարածարջանային խորհրդատվական «3+3» ձեւաչափը: Նա հույս է հայտնել, որ 2024 թ. Թուրքիայում նախատեսված հանդիպմանը կքննարկվեն տրանսպորտային հարցեր:

«Այս ձեւաչափում Երեւանի կառուցողական առաջարկները, վստահ եմ, պահանջված կլինեն»,- եզրափակել է Զախարովան:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԿՄԱՄՆԱԿՑԻ ՖՈՐՈՒՄԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կմասնակցի Փարիզի խաղաղության ֆորումին: Այն կազմակերպվում է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հովանու ներքո: Ֆորումը տեղի կունենա նոյեմբերի 10-ին եւ 11-ին:

Ֆորումի խոսնակների թվում են Հայաստանի վարչապետը, Ֆրանսիայի նախագահը, Եվրախորհրդի նախագահ Շառլ Միշելն ու այլք:

## ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ, ՔՆՆԱՐԿԵԼ

Նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետություն պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունել է աշխատանքային այցով Հայաստանի Հանրապետությունում գտնվող Իտալիայի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, ծովակալ Ջուզեպպե Կավո Դրագոնեի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-իտալական պաշտպանական համագործակցությանն ու տարածաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր:

Պաշտպանության նախարարն ընդգծել է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում հարաբերությունների զարգացման հեռանկարները, որոնց վերաբերյալ հանդիպման ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ:

## ԴԱՐՁԵԼ Է ԴԵՍՊԱՆ

ԱՄՆ Սենատը հավանություն է տվել Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի պաշտոնում Մարկ Լիբիի թեկնածությանը: Այս մասին տեղեկացրել են ամերիկյան Սենատի X սոցցանցի էջում. տեղեկացրել են ադրբեջանական ՁԼՄ-ները:

Մարկ Լիբիի թեկնածությունը հավանության է արժանացել քվեարկության միջոցով: Ավելի վաղ նրա թեկնածությունը հաստատել էր Սենատի արտաքին գործերի կոմիտեն:

Մարկ Լիբին խորհրդական-բանագնացի կարգ ունի, ազատ խոսում է լեհերեն եւ ֆրանսերեն: Մինչեւ 2021թ. հունիս զբաղեցրել է Բրյուսելում Եվրամիությանը կից ԱՄՆ առաքելության փոխղեկավարի եւ ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատարի պաշտոնները:

## ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ՝ ԱՄՆ-ՈՒՄ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների կոմիտեն հայտարարել է, որ եվրոպական գործերի ենթակոմիտեն հրավիրում է լսումներ՝ «Լեռնային Ղարաբաղի ապագան» անվանմամբ:

Լսումները տեղի կունենան նոյեմբերի 15-ին:

Նիստին կմասնակցեն եւ ելույթ կունենան նաեւ ԱՄՆ պաշտոնատար անձինք, մասնավորապես՝ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի գործերի գծով տեղակալ Ջեյմս Օ'Բրայենը եւ Եվրոպական եւ Եվրասիական բյուրոյի ղեկավարի օգնականի տեղակալ Ալեքսանդր Սոկոլովսկին:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

# ՊԵՏԲՅՈՒՋԵ Է ՎՃԱՐՎԵԼ 300 ՄԼՆ ԴՐԱՄ

**«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով բացահայտվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից առանց հաշվարկային փաստաթղթերի տրամադրման պայմանագրեր իրացնելու, շրջանառությունը թաքցնելու եւ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեմք:**

ՔԿ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ, մասնավորապես, ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ վարութային գործողությունների, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության եւ ռիսկերի վերլուծության վարչության աշխատակիցների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Մ.Մ-ն, հանդիսանալով 2018թ. մարտի 20-ին պետական գրանցում ստացած, «ՊՈՊՈ» անվանումով խանութների միջոցով խաղերի ու խաղալիքների առեւտրով զբաղվող ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատերը եւ տնօրենը, տարբեր ժամանակահատվածներում խաղալիքների առեւտուր իրականացրած եւ նույն անվան ներքո գործած անհատ ձեռնարկատեր Ա.Պ.-ի գործունեությունը փաստացի ղեկավարած անձ, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ու ՀՀ հարկային օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանատու լինելով ընկերության հաշվապահական հաշվառումը կազմակերպելու, հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ, հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթեր ու տեղեկություններ սահմանված ժամկետում հարկային մարմին ներկայացնելու, հարկերը ճիշտ եւ ինքնուրույն հաշվարկելու, ժամանակին վճարելու ու հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու համար, իր եղբայր՝ նույն ընկերության հաշվապահ Ս.Մ.-ի հետ նախնական համաձայնությամբ հարկեր չվճարելու նպատակով, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ, 61-րդ, 104-րդ եւ 105-րդ հոդվածների պահանջները, 2018թ. օգոստոս ամսից 2020թ. դեկտեմբեր ամիսը ներառյալ թաքցրել է ընկերության հարկման օբյեկտը: Վաճառքներ իրականացնելիս չի տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ ու դուրս չի գրել հարկային հաշիվներ, իսկ հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, ինչպես նաեւ, որպես Ա/Ձ, Ա.Պ.-ի գործունեությունը փաստացի ղեկավարող անձ, 2018թ. օգոստոս ամսից 2020թ. դեկտեմբեր ամիսների ընթացքում վերջինիս միջոցով նույն եղանակով թաքցրել է անհատ ձեռնարկատիրոջ հարկման օբյեկտները: Արդյունքում պետական բյուջե չի վճարել առանձնապես խոշոր չափերով հարկեր:

Քրեական վարույթով ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝ ընկերության տնօրեն Մ.Մ.-ի, հաշվապահ Ս.Մ.-ի եւ Ա/Ձ Ա.Պ.-ի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հարուցվել են քրեական հետապնդումներ, եւ վերջիններիս ներկայացվել է մեղադրանք:

Հավելենք նաեւ, որ ներկայացված մեղադրանքում Մ.Մ.-ն, Ս.Մ.-ն եւ Ա.Պ.-ն իրենց մեղավոր են ճանաչել, հարկային մարմին են ներկայացրել ճշտված հարկային հաշվարկներ եւ հայտարարագրել նախկինում թաքցված 785.000.000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը, որից 2023թ. նոյեմբերի 8-ին պետական բյուջե են վճարել շուրջ 300.000.000 ՀՀ դրամը, իսկ մնացած հարկային պարտավորությունները պարտավորվել են վճարել սեղմ ժամկետում:

ՊԱՐՔՎԵՑ

## ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՆ ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄ

Նոյեմբերի 8-ին հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ որպես տաքսի շահագործվող «Տոյոտա» մակնիշի մեքենայով նոյեմբերի 7-ին Շիրակի փողոց է տեղափոխել մի ուղեւորուհու, որը վճարել է 5000 կեղծ թղթադրամ:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումներով պարզել են ուղեւորուհու ինքնությունը: 26-ամյա կինը հայտնաբերվել եւ տեղափոխվել է նախաքննական մարմին:

Նոյեմբերի 8-ին ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն նմանատիպ մեկ այլ հաղորդում էր ստացվել: Քաղաքացին հայտնել էր, որ Սեւանի փողոցում անհայտ անձը իրեն կեղծ 5000-դրամանոց է տվել:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումներով պարզել են, որ քաղաքացուն կեղծ թղթադրամը տվել էր 26-ամյա երիտասարդը: Բացատրական աշխատանքի շնորհիվ՝նա ներկայացել է բաժին եւ խոստովանել:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին:

Կատարվում է նախաքննություն:

## ՔԱՇՔՇԵԼ ԵՆ, ՀԱՅՀՈՅԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նոյեմբերի 5-ին Արմավիրի մարզի Ապագա գյուղի մոտ «Ֆորդ» մակնիշի եւ «Մերսեդես» մակնիշի մեքենայի վարորդները ճանապարհը չզիջելու շուրջ վիճաբանել են ու քաշքշել միմյանց:

«Մերսեդես»-ի վարորդի կինը, որը ամուսնու հետ է եղել, ողջ միջադեպի ականատեսն է եղել ու վիճաբանության ժամանակ օգնություն է կանչել:

Դեպքից հետո «Մերսեդես»-ի վարորդը կատարված միջադեպի մասին պատմել է որդիներին, ու կռիվը ունեցել է նոր շարունակություն: «Մերսեդես»-ի վարորդի որդիները գնացել են Ջրառատի կամուրջի մոտ ու հանդիպման կանչել «Ֆորդ»-ի վարորդին:

Հանդիպումը կայացել է, ու սկսվել է թեժ քննարկում, որից հետո «Մերսեդես»-ի վարորդի որդին հանել է ինքնաձիգը ու կրակել միջադեպի մյուս մասնակիցների ուղղությամբ, որի կրակոցներից մեկ անձ ոտքի շրջանում ստացել է հրազենային վնասվածք:

Իրավապահները փնտրում են միջադեպի մասնակիցներին:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԴԱՏԱԿԱՆ

## ՊԵՄԶԱՇԵՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Պեմզաշենում սարսափելի սպանության համար մեղադրվողներից 33-ամյա Վրույր Բարսեղյանը նոյեմբերի 9-ին դատարանում հայտարարեց, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ունի վեցամյա կրթություն: Նա նշեց, որ ամուսնացած է, խնամքին ունի երեք երեխա, մայրն ու կինը: Երեխաներից ավագը վեց տարեկան է, միջնեկը՝չորս, փոքրը՝ մեկ, նախկինում դատապարտված չի եղել:

Հարցին՝ մեղադրական եզրակացությունը, իրավունքների վերաբերյալ հուշաթերթիկը ստացել է արդյոք, նա պատասխանեց. «Ստացել եմ, բայց չեմ կարդացել, հայերեն տառերին լավ չեմ տիրապետում: Թարգմանչի կարիք չունեմ, հայերեն տառերը չգիտեմ, որովհետեւ Ռուսաստան եմ դասի գնացել»,- հայտարարեց Բարսեղյանը:

Հուշաթերթիկը նրա համար կարդալ խնդրեցին պաշտպան Աղաջանյանին:

Արկադի Բարսեղյանը հայտարարեց՝ ամուսնացած է, խնամքին հինգ տարեկան որդին է, հայրը, մայրը, եղբայրը: Նախկինում դատապարտված չի եղել, հիմնականում մեկնել է արտագնա աշխատանքի:

Նրա՝ նոր ներգրավված պաշտպանը հայտարարեց՝ ծանոթ է գործի նյութերին, կարող են նիստը շարունակել:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 9-ին Պեմզաշեն գյուղի սեփական բնակարանում սպանված էին գտել 31-ամյա Զարինե Մելիքսեթյանին, նրա 12-ամյա դստերը եւ 8-ամյա որդուն:

Դաժան սպանության կասկածանքով ձերբակալվել, ապա կալանավորվել են Շիրակի մարզի 32-ամյա բնակիչ Վրույր Բարսեղյանը եւ նրա ազգականը՝ 41-ամյա Արկադի Բարսեղյանը:

Վրույրը Բարսեղյանն ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը՝ տալով ինքնախոստովանական ցուցմունք, իսկ Արկադի Բարսեղյանը հակառակը՝ չի ընդունում մեղադրանքը եւ նշում է, որ դեպքի վայրում չի եղել: Երկու մեղադրյալներն էլ ամուսնացած են, ունեն երեխաներ: Սպանված կնոջ ամուսինը ՌԴ-ում էր՝արտագնա աշխատանքի, վերադարձել է ողբերգական դեպքից հետո:

Ըստ Քննչական կոմիտեի վարկածի՝ անմարդկային սպանությունների շարժառիթը եղել է գողությունը:

Վրույր Բարսեղյանին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ ՔՕ 155-րդ (սպանություն) հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ եւ 13-րդ կետերով, 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ , 5-րդ, 6-րդ եւ 13-րդ կետերով (2 դրվագ), 252-րդ (ավազակություն) հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 198-րդ (սեքսուալ բնույթի բռնի գործողություններ) հոդվածի 4-րդ մասով: Արկադի Բարսեղյանին մեղադրանք է ներկայացվել 155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ, 13-րդ կետերով եւ 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 8-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 68 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

## ԴԻԼԻՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂ ՉԿԱ

Դիլիջան քաղաքի բնակիչները հայտնում են, որ երբ իրենք դիմել են Դիլիջանի համայնքապետարան իրենց տնամերձ կամ որեւէ օբյեկտ կառուցելու համար հող հատկացելու խնդրանքով, համայնքապետարանից պատասխանել են, որ քաղաքում ազատ հողեր չկան, որպեսզի տրամադրեն: Նախկինում փաստերով գրել եմ, որ Դիլիջանի քոլեջի շրջանավարտ, ներկայումս Եվրոպական համալսարանում հեռակա սովորող, համայնքի 39-ամյա ղեկավար, ՔՊ կուսակցության Դիլիջանի կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը Դիլիջան քաղաքից հողեր է օտարել Երեւան քաղաքի շատ բնակիչների: Հիմա էլ համայնքապետը հող է օտարել Վանաձոր քաղաքի բնակչի: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկանում ենք, որ Դիլիջանի համայնքի ղեկավարի 2023թ. հոկտեմբերի 5-ի թիվ 856-Ա որոշմամբ՝ 2023թ. նոյեմբերի 6-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 600 քառակուսի մետր մակերեսով հողամաս՝ Դիլիջան քաղաքի, Սարալանջի փողոցի թիվ 17/6 հասցեում, բնակելի կառուցապատման նպատակով, 4200000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 4410000 դրամ առավելագույն գնով հաղթել է Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի 45 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ Գուրգեն Հարությունյանը, որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 4 արձանագրությունը: Համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է հաստատել Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը եւ այդ հողամասը բնակելի կառուցապատման նպատակով օտարել Վանաձորի բնակիչ Գուրգեն Հարությունյանին:

## ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ ՉԿԱՆ

Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի բնակիչ, Հայաստանի սահմանների պաշտպանությանը, ազատամարտին մասնակցածները բողոքում են, որ այս տարվա հոկտեմբերին պետք է իրենց կենսաթոշակի չափն ավելանար 5 հազար դրամով: Այդ գումարը տրվում է որպես մարտական գործողությունների մասնակցի: Սակայն, մարտական գործողությունների շատ մասնակիցներ զրկված են կենսաթոշակի այդ հավելավճարից, քանի որ մարտական գործողություններին իրենց մասնակցության փաստաթղթային հիմքեր չկան կամ չեն պահպանվել: Այդպիսի փաստաթղթեր են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ «Երկրապահ» կամավորականների միության կողմից տրված վկայականները կամ տեղեկանքները:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՅԱԹԱՓՎԵՑ

# ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՑԱԽՈՒՄ

**2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը լայնամասշտաբ պատերազմ սկսեց Արցախի Հանրապետության դեմ:**

Ուղիղ ժամը 13:00-ին Ադրբեջանը սկսեց զանգվածային հրթիռահրետանակոծությամբ, ապա անօդաչու թռչող սարքերով հարվածել քաղաք Ստեփանակերտին, ինչպես նաեւ Մարտակերտ, Ասկերան եւ Մարտունի շրջաններին ու գյուղերին: Մարտերը տեղի ունեցան շփման գծի ողջ երկայնքով: Սառնաղբյուրի, Թաղավարդի, Սոս գյուղի բնակիչների վկայությամբ՝ նշված գյուղերում ադրբեջանցիները կատարել են մի շարք մարդկային դաժանություններ, որոնք կոծկելու համար սպանել են անգամ ռուս խաղաղապահների:

Ադրբեջանի Հանրապետության նպատակը մեկն էր՝ էթնիկ զտման ենթարկել հայկական Արցախը: Սեպտեմբերի 20-ին հայտարարվեց զինադադար: Ըստ զինադադարի՝ պետք է լուծարվեր Արցախի պաշտպանության բանակը, զինաթափվեր ժողովուրդը եւ ճանապարհ տրվեր դեպի մայր Հայաստան՝ Արցախը լքելու համար: Սեպտեմբերի 21-ից հայաթափվում էր Արցախը՝ ըստ շրջանների:

Մինչեւ Արցախից դուրս գալը՝ պատերազմի առաջին րոպեներից, նկարել ենք մի քանի դրվագ Ստեփանակերտում այդ օրերում տիրող կյանքից. շրջանների եւ գյուղերի բոլոր բնակիչները կենտրոնացել էին քաղաք Ստեփանակերտում: Մարտեր էին ընթանում Ստեփանակերտի մերձակայքերում՝ Աշափնյակում, Քրքջանում, Քարաշեն գյուղում: Քաղաքից լսելի էին ինքնաձիգի կրակոցների ձայները:

Պատերազմի սկսվելուն պես հանրապետության ողջ տարածքում հոսանք չկար, գազամատակարարումն ամիսներ առաջ էր արգելվել Ադրբեջանի կողմից, եւ մարդիկ հաց էին պատրաստում դրսում՝ փայտի վառարանների վրա:

Հոսանքի բացակայության պատճառով մարդկանց հոսքը չէր բացակայում «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության եւ Կառավարության շենքից, որպեսզի լիցքավորեն հեռախոսները հեռախոսակապ ունենալու համար:

Գաղթի ճանապարհին մարդիկ անակնկալի եկան ճանապարհին այդքան երկար կանգնեցնելու համար եւ ուտելիք հայթայթելու համար սկսեցին հարակից այգիներից նուռ եւ տանձ հավաքել: Ճանապարհին մարդիկ մի ընտանիք էին: Փայտ էին հավաքել եւ միս էին եփում: Նրանց մոտեցավ մի տղա երեխա (հազիվ 12 տարեկան) եւ դիմեց կանգնածներից մեկին.

-Զյա՛ճ, կարիս ինձ էրկու կտոր մէս տաս: Մինը տամ մամուն, մինը՝ կուճիր քվորս:

-Հա՛, մատաղ ինիմ,- ասաց տղամարդը՝ ձեռքի ցելովանի մեջ լցնելով մի 8 կտոր միս:

Սեպտեմբերի 25-ին՝ ժամը 6-ից 7-ն ընկած ժամանակահատվածում, բենզալցակայանում դեռեւս անհասկանալի պայմաններում պայթյուն տեղի ունեցավ, եւ Եղբայրական գերեզմանոցի կողքի ճանապարհից (տարածքը տեղացիներն անվանում են մազի կամուրջ) մարդիկ կիսամերկ ու կիսավառված վիճակում վազում էին հիվանդանոց: Ճանապարհին մարդիկ մեքենաներում սպասում էին, որպեսզի Հայաստանի Հանրապետությունից ուղարկված շտապ օգնության մեքենաները գան եւ ծանր վիրավորներին տեղափոխեն ՀՀ:

Ծայրահեղ ծանր վիրավորներին ռուս խաղաղապահների միջոցով ուղղաթիռներով էին տեղափոխում ՀՀ:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

## ՏԱՐԿԵՏՈՒՄ՝ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արցախի բուժաշխատողներին անհրաժեշտ է տարկետում տալ լիցենզիա ստանալու հարցում: Այս մասին Ազգային ժողովում առողջապահության խորհրդարանական մշտական հանձնաժողովի նիստին՝ «Բուժօգնության եւ բնակչության սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրինագծի քննարկման ժամանակ՝ նոյեմբերի 9-ին, ասել է առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ առաջարկվում է տարկետում տրամադրել մինչեւ 2025թ. հունվարի 1-ը: «Այժմ բուժաշխատողները անհրաժեշտ քանակությամբ կրեդիտներ չեն հավաքում, բայց բուժկենտրոններում բավական թվով թափուր տեղեր կան, եւ այդ մարդկանց պետք է աշխատանքի տեղավորել»,- ասել է Նանուշյանը:

Արդեն 90 բուժաշխատողներ ստացել են լիցենզիա: Իրականացվում են անվճար դասընթացներ Արցախի բուժաշխատողների որակավորման բարձրացման համար: «Արդեն գրանցվել է 600 մարդ, բայց էլի 600 տեղ մնում է»,- ասել է պաշտոնյան: Արցախցի բուժաշխատողները կարող են անվճար սովորել նաեւ օրդինատուրայում: Քննարկումից հետո օրենսդրական նախաձեռնությունը ստացել է հանձնաժողովի դրական եզրակացությունը:

## ՊՈՒՏԻՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ու նրա վարչակազմի անդամները եկամուտների հայտարարագրեր են ներկայացրել, սակայն այս տարի նման փաստաթղթերը չեն հրապարակվել: Բանն այն է, որ այս տարվա մարտի 1-ից ՌԴ-ում ուժի մեջ է մտել օրենք, որով այս տարվանից դադարեցվում է պաշտոնյաների եկամուտների մասին տեղեկությունների հրապարակումը: Հունվարին, երբ օրենսդրական նորմը դեռ քննարկվում էր խորհրդարանում, Կրեմլը նախաձեռնությունը բացատրեց նրանով, որ Ուկրաինայում ռազմական գործողությունները ներդնում են իրենց առանձնահատկությունները: Միեւնույն ժամանակ, նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը նշել էր, որ քաղաքացիական ծառայողները կշարունակեն տեղեկատվություն տրամադրել եկամուտների եւ ծախսերի վերաբերյալ: 2021 թվականին Պուտինը վաստակել էր 10,2 միլիոն ռուբլի: Երկրի ղեկավարին է պատկանում երկու բնակարան (77 եւ 153,7 քմ մակերեսով), ավտոտնակ, ավտոտնակի տարածք, ինչպես նաեւ «ԳԱԶ-21Մ» եւ «Նիվա» մակնիշի ավտոմեքենաներ:

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 24-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՍՏԱՏԵՑ

# ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կառավարությունը նոյեմբերի 9-ի նիստում հաստատեց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը եւ տրամադրման կարգը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, ներկայացնելով նախագիծը, նշեց, որ այս նախագծով առաջարկվում է ԼՂ-ից բռնի տեղականվածների համար իրականացնել երկամսյա սոցիալական աջակցություն՝ նոյեմբեր-դեկտեմբերի համար 50-հազարական դրամի չափով, առաջնային սոցիալական ծախսերը հոգալու նպատակով:

«Միջոցառման շահառու կհանդիսանան 100 հազար դրամ սոցիալական աջակցության շահառուները՝ որոշ բացառություններով: Միջոցառման շահառու չեն հանդիսանա նոյեմբերի 15-ի դրությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող, ՀՀ-ում չգտնվող եւ իրենց բանկային հաշիվներում 2 մլն դրամից ավելի գումար ունեցող անձինք: Խոսքը ոչ թե ընտանիքի անդամների կամ երեխաների, այլ այն անձանց մասին է, որոնք ունեն այդ դրամական միջոցները: Բացառություն կկազմեն զինծառայողների ապահովագրության հիմնադրամից հատուցում ստացող անձինք: Ծրագրից չեն կարող օգտվել մինչեւ տեղահանումը Հայաստանում հաշվառվածները: Ծրագրից օգտվողը կտա իր բանկային հաշիվների հանրագումարային մնացորդը ստուգելու հնարավորություն:

Դրամական աջակցություն ստանալու համար անհրաժեշտ կլինի ներկայացնել մեկանգամյա էլեկտրոնային դիմում: Դիմումները կսկսենք ընդունել՝ եկող շաբաթվանից սկսած: Դիմումներ ներկայացնելու ընթացակարգը նույնպես կներկայացնենք առաջիկա օրերին:

Վճարումներն իրականացվելու են անկանխիկ եղանակով: Այս նպատակով հարկ կլինի պահուստային ֆոնդից հատկացնել շուրջ 10 մլրդ դրամ»,-ասաց նախարարը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ այստեղ տրամաբանությունն այն է, որ այս ծրագրերի արդյունքում բռնի տեղահանվածները պետք է հյուրանոցներից դուրս գան, այլ տեղերում բնակվեն, որպեսզի հյուրանոցները վերադառնան իրենց բիզնես տրամաբանությանը:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ: Աճուրդի ընթացքում վաճառվելու են.

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

Լոտ 1. ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ն. Հովնաթանի փողոց, 22 հասցեում գտնվող 96,2 քմ բնակելի տուն, 125,1 քմ օժանդակ շինություն, 95,3 քմ բնակելի տուն, 2.3 քմ/7.82 խմ/ պարիսպ, 21 քմ ինքնակամ շինություններ, 0,017675 հա, 0,01639 հա մակերեսով հողամասեր (0,01639 հա հողամասը եւ 95,3 քմ բնակելի տունը ընդհանուր բաժնային սեփականություն են հանդիսանում Ն. Հովնաթանի փողոց, 22 եւ Ն. Հովնաթանի փողոց 22/1 բնակելի տների սեփականատերերի համար զ բաժնեմասով): Լոտի մեկնարկային գինը՝ 33000000 ՀՀ դրամ:

Լոտ 2. Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, գյուղ Արզական, Բջնիի խճուղի, 8/2-10/1 հասցեում գտնվող 72,4 քմ ամառային խոհանոց, 55,35 քմ ջրավազան, 118,2 քմ հարթակ, 14 քմ /28 խմ/ պարիսպ, 31,7 քմ /95,1 խմ/ պարիսպ, 198,9 քմ ինքնակամ կառուցված բնակելի տուն, 8 քմ ինքնակամ կառուցված մառան եւ 0,2097 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 42000000 ՀՀ դրամ:

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը (լոտերի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքերը գրավադրված են)՝

Լոտ 3. Արարատի մարզ, համայնք Բերքանուշ, Թումանյան փողոց, 7 հասցեում գտնվող 356,5 քմ բնակելի տուն, 15,92 քմ անասնաշենք, 6,68 քմ հնոց, 12,2 քմ թանրատուն եւ 0,156 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35300000 ՀՀ դրամ,

Լոտ 4. Արարատի մարզ, համայնք Հայանիստ, Էջմիածնի փողոց, 1 հասցեում գտնվող 207.7 քմ վարչական շենք եւ 0,332 հա մակերեսով հողամաս (հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ): Լոտի մեկնարկային գինը՝ 43400000 ՀՀ դրամ:

Լոտ 1-ի եւ Լոտ 2-ի աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 27.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին:

Լոտ 3-ի եւ Լոտ 4-ի աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 27.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով:

Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

## ՎԱՃԱՌՔ

# ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ ⇨

Հայաստանից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներ հացահատիկի արտահանման արգելքը երկարաձգվեց եւս 6 ամսով. նման որոշում ընդունվեց Կառավարության հերթական նիստում:

«Հայաստանից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» Հայաստանի կառավարության որոշման նախագծով ժամանակավոր՝ 6 ամիս ժամկետով, արգելք է սահմանվում մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների, այդ թվում՝ ցորենի, մեսլինի, գարիի, եգիպտացորենի, հնդկացորենի, արեւածաղկի սերմի, արեւածաղկիի ձեթի արտահանման նկատմամբ»,- նշված է նախագծում:

Որոշումն ուղղվում է ՀՀ պարենային անվտանգության եւ տնտեսության կայունացման ապահովմանը, քանի որ այդ ապրանքների մասով ներքին արտադրությունը չի բավարարում ՀՀ շուկայի պահանջարկը, եւ այդ բացը լրացվում է հիմնականում ներմուծման ծավալների հաշվին:

Արգելքը չի տարածվելու ՀՀ ներմուծված եւ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ ՀՀ-ից արտահանվող ապրանքների վրա:

# ՍԵՎ ՈՒՐԲԱԹԸ ԿՄԵԿՆԱՐԿԻ

Wildberries-ը վերջին թարմացումներից հետո, երբ հայ տնտեսվարողների բողոքների հիման վրա փակվեց ռուսաստանյան հասցեով մատչելի գնումներ կատարելու տարբերակը, եւ գնումները հայաստանյան հասցեներից նվազեց, օգտատերերը վախով էին ընդունում ծրագրի հետագա թարմացումներն այն մտքով, որ հնարավոր է՝ մի նոր բան ավելանա, պակասի կամ փոխվի ոչ իրենց օգտին:

Վերջերս փոփոխությունների ու նույն թարմացումների ֆոնին՝ Wildberries-ի նշանին ավելացվեց ինչ-որ անհասկանալի թվային համակցություն՝ 11.11:

Որոշ աղբյուրներ հայտնում են, որ մարքեթինգային այդ արշավը վերաբերում է սեւ ուրբաթին, քանի որ հարթակը որոշել է, որ պետք է շուտ սկսի զեղչերը՝ նոյեմբերի 11-ին:

Սակայն նաեւ հայտնի է, որ բոլորին հայտնի Սեւ ուրբաթն այս տարի տեղի է ունենալու նոյեմբերի 24-ին: Այն հետաքրքիր մարքեթինգային քայլ է, որի ճիշտ օգտագործման դեպքում մեծաքանակ հաճախորդներ եւ եկամուտ կարող է ստանալ տնտեսվարողը:

Սեւ ուրբաթի ընթացում հաճախորդը աննախադեպ զեղչերով կարող է ձեռք բերել ապրանքներ: Թե ինչպես է Սեւ ուրբաթը կազմակերպվում Հայաստանում, դա անհատական է, սակայն մի շարք միջազգային հարթակներ, այդ թվում՝ Wildberries-ը, իրենց արշավն ավելի վաղ են կազմակերպում:

Պարզվում է՝ Wildberries-ը իր հաճախորդների համար նախատեսում է զեղչեր մինչեւ 90%, սակայն ոչ բոլորի համար: Այն ապրանքները, որոնք կունենան զեղչվելու հնարավորություն, հատուկ ձեւով կնշվեն իրենց նախնական լուսանկարին կից: Սեւ ուրբաթն օնլայն այս շոփում տեւելու է մինչեւ նոյեմբերի 28-ը:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ԿԱՐԾԻՔ

ՊԱՏՄԵՑ

# ԶԱՌԱ ՍԱՀԱԿՅԱՆ ՈՒ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐԸ

**Վերջին շրջանում, կաղված երկրում իրավիճակի լարման հետ, մշակութային կյանք վարող արտիստների զգալի մասը, եթե ոչ բոլորը, սկսեցին դադար տալ իրենց գործունեությանը: Նրանց թվում էր եւ դերասանուհի, հումորիստ Զառա Սահակյանը, որը միայն վերջերս է վերսկսել ստեղծագործական ակտիվ գործունեությունը:**

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Զառան ներկայացրել է մանրամասներ, թե ինչով է այս պահին զբաղված, եւ ինչ անելիքներ կան մոտ ապագայում:

«Հեռուստադիտողը առիթ ունեցավ դիտելու իմ մասնակցությամբ շատ սիրված «Բոլոլա» սիթքոմը, որում, կարծում եմ, կարողացա կերտել այն կերպարը, որն ի սկզբանե հանձն էի առել: Հավանաբար «Բոլոլան» կունենա երկրորդ եթերաշրջան: Այս պահին ներգրավված եմ նաեւ «ԿինԿոդ» ներկայացման մեջ, «Women's club»-ում եմ շարունակում իմ գործունեությունը եւ, իհարկե, իմ մոնոներկայացման՝ «Զառանցանք»-ի նոր՝ փոփոխված տարբերակի վրա եմ աշխատում»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Զառանցանք» ներկայացման փոփոխված տարբերակն ունենալու է «Զառանցանք restart» անվանումը: Իմրոպվիզացիաների արդյունքում ռեժիսոր Սեդրակ Կոջամանյանի եւ սցենարիստ Արմեն Վարդանյանի հետ քննարկումից հետո որոշվել է ներկայացումը «Restart» անել, այդ իսկ պատճառով էլ հենց այդ անվանումն է ստացել այս անգամ:

Խոսելով ներկայացման փոփոխությունների մասին՝ Զառան պատմում է, որ երկար ժամանակ է, ինչ խաղում է «Զառանցանք» ներկայացումը, եւ շուրջ 14000 հանդիսատես է ունեցել:

«Ներկայացման առանցքը, հիմքը միմիայն հայ կնոջ մասին է, նրա խնդիրների, տեսակետների, մտորումների մասին է: Բայց միեւնույն ժամանակ էլ ի՞նչ հայ կին առանց տղամարդու, եւ այստեղ արդեն գալու է տղամարդու դերակատար, որի կերպարը կերտելու է հենց ներկայացման ռեժիսոր Սեդրակ Կոջամանյանը: Այս ամենին շատ հետաքրքիր լուծում, համ ու հոտ է տվել սցենարիստ Արմեն Կոջամանյանը. այն զրոից գրված կերպար է»:

Նոր գրված կերպար է կերտելու նաեւ հենց ինքը՝ Զառան:

«Մարմնավորելու եմ ծանրորդ կնոջ: Պատկերացրե՛ք՝ ինչքան բարդ է մարմնավորել այդ բնագավառի ներկայացուցիչ կնոջ հոգեվիճակը, թե ինչքան բարդ վիճակում կարող է նա հայտնվել եւ ինչերի հետ կարող է առնչվել: Իհարկե, այս ամենը հումորային տեսանկյունից է դիտարկվելու: Նաեւ ունենալու ենք հումորային, երաժշտական համար, որը անակնկալ է լինելու հանդիսատեսի համար»:

Խոսելով մոտակա նախագծերի մասին՝ Զառան նշում է, որ դեռեւս հստակ կարող է ասել, որ «Բոլոլա 2» եւ «Women's club» նախագծերում է հանդես գալու, չնայած ունի երկու այլ նախագծի առաջարկ եւս, որոնք դեռեւս քննարկման փուլում են: Հաստատվելու դեպքում դերասանուհին կտեղեկացնի նաեւ դրանց մասին:

*ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ*

ՍՊՈՐՏ

## ՄԱՐՔԻՉԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» հոլանդացի գլխավոր մարզիչ Էրիկ տեն Հագը մեկնաբանել է Չեմպիոնների լիգայի խմբային փուլի չորրորդ տուրում դանիական «Կոպենհագենից» կրած 3:4 հաշվով պարտությունը: Առաջին խաղակեսի վերջնամասում հեռացվել էր մանչեսթերյան թիմի անգլիացի հարձակվող Մարկուս Ռեշֆորդը:

«Մինչեւ կարմիր քարտը մենք շատ լավ էինք խաղում: Ռեշֆորդի հեռացումը փոխեց ամեն ինչ: Սկսվեց այլ խաղ: Մենք բաց թողեցինք երկու գոլեր, որոնք պետք է չեղարկվեին. խաղից դուրս վիճակ կար, հետո խախտում: Դա հիասթափեցնում է: Շատ որոշումներ մեր դեմ էին:

Վերջնամասում կորցրեցինք կենտրոնացումը: Ծանր է երկար ժամանակ 10 ֆուտբոլիստով խաղալը:

Այսպիսի բաներ, բայց մրցաշրջանի ավարտին դեռ շատ կա: Կարող է ամեն ինչ փոխվել մեր օգտին»,- Տեն Հագի խոսքը մեջբերում է BBC-ն:

Ա խմբում «Մանչեսթեր Յունայթեդը» 3 միավորով վերջինն է: «Բավարիան» 12 միավորով ապահովել է փլեյ-օֆֆի ուղեգիրը: «Կոպենհագենն» ու թուրքական «Գալաթասարայն» ունեն 4-ական միավոր:

## ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ

Իտալիայի հավաքականի եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը սոցիալական ցանցերում արած գրառումով անդրադարձել է Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ դուրս գալուն:

«Մենք դարձյալ արեցինք դա. Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ»,- գրել է հայ ֆուտբոլիստը՝ հրապարակելով լուսանկարներ հանդիպումից:

Չորրորդ տուրում ավստրիական «Զալցբուրգին» 1:0 հաշվով հաղթելու շնորհիվ՝ «Ինտերը» վաստակեց 10 միավոր եւ խմբային փուլի ավարտից երկու տուր առաջ ապահովեց փլեյ-օֆֆի ուղեգիրը:

Իտալացի Սիմոնե Ինզագիի գլխավորած թիմը երրորդ մրցաշրջանում անընդմեջ է հասնում այսպիսի հաջողության:

## ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ՌԵԿՈՐԴԸ

Մադրիդի «Ռեալի» 64-ամյա իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին դարձավ Չեմպիոնների լիգայի ռեկորդակիրը հաղթանակների քանակով. հաղորդում է Արքայական ակումբի մամուլի ծառայությունը:

Անչելոտին գերազանցեց «Մանչեսթեր Յունայթեդի» նախկին գլխավոր մարզիչ, շոտլանդացի Ալեքս Ֆերգյուսոնի ռեկորդը:

Խմբային մրցաշարի չորրորդ տուրում պորտուգալական «Բրագային» 3:0 հաշվով պարտության մատնելու շնորհիվ՝ Անչելոտին Չեմպիոնների լիգայում հաղթանակների քանակը հասցրեց 116-ի: Ֆերգյուսոնը 115 հաղթանակ ունի այս մրցաշարում գլխավոր մարզիչի դերում: Նա մարզչական կարիերան ավարտել է 2013 թվականին:

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀՀ ԱԺ բոլոր պատգամավորներին
N1 ծերանոցի շահառու,
Ապարան համայնքի Նիգավան գյուղի
բնակիչ՝Հարություն Համամջյանից (հ.055 777 180)

Դիմում
Հարգարժան եւ պատվարժան պատգամավորներ.

Մեր երկրում այնպիսի օրենքներ են գործում, որ «Կարկուտը ծեծած տեղն է միշտ ծեծում»: Հանգամանքը կայանում է նրանում, որ վերջին 24 տարում ինձ, իմ պաշտելի հայրենիքում, անասելի եւ աննկարագրելի հոգեկան եւ ֆիզիկական կտտանքներ են ենթարկել: Այս մասին բազմաթիվ անգամներ ահազանգել ու բարձրաձայնել են հայկական տարբեր օրաթերթեր, հաղորդվել է ռադիոյով ու հեռուստատեսությամբ, «յուրաքանչյուր» եւ «Ֆեյսբուք» էլեկտրոնային ցանցերով, գրել եմ իմ «Մի՛ կարդա» խորագրով տպագրված գրքում... Եվ այլն: Սակայն ես ասում էի, ես՝ լսում: Ես գրում էի, ես՝ կարդում: Բարձրաստիճան վերեւներում ոչ ոքի դա չէր հետաքրքրում: Իմ հարյուրավոր դիմում, տրտունջ, հայտարարություն, խնդրանքներին ամենաբարձրաստիճան վերեւներից տալիս էին անհեթեթ, անտրամաբանական, լոյալ, խուսափողական, անմարդկային, երբեմն էլ հակասահմանադրական, անօրինական, կամ պարզապես մերժողական պատասխաններ: Սակայն ես չէի բողոքում, ես խնդրում էի...

Ես մորթեպաշտ չեմ, բայց նախկինում վախենում էի, իսկ հիմա բարձրաձայնում եմ. «25 տարի իմ նկատմամբ, նախադեպը չունեցող, կոշտ ու պրեսինգային քաղաքական հետապնդում է եղել, որում շատերն էին շահագրգռված»: Դա տարբեր տարիներին տարբեր կերպ էր արտահայտվում...

Ինձ խանգարում են ամեն տեղ եւ ամենուր...

Երիտասարդ տարիքում գոմեշի նման եմ աշխատել... Նիգավան գյուղի եկեղեցու կապիտալ վերանորոգման բարոյական հովանավորը (ամենագլխավոր եւ միակ նախաձեռնող) ես եմ եղել 2009թ.ին: Եվ ինքս էլ 4 տարի՝ 4-ական ամսով, աշխատել եմ որպես օժանդակ բանվոր... Ինձ Երեւան քաղաքում բոլորն են ճանաչում... Ես այն հատուկենտ երջանիկներից եմ, որ 2007թ-ին իմ մասին երգ է հորինել Երեւանի Արաբկիր թաղամասում ապրող կին-աշուղը, եւ հեռուստատեսությամբ ինքն էլ երգել է այդ երգը...

Ես գիտեմ, որ բեւեռային աստղ եմ աստղային երկնակամարում, սակայն աստղային հիվանդությամբ չեմ տառապում: Շատ հանգիստ եմ տանում իմ հանրահայտ լինելը... Այս պահին գիրք եմ գրել, բայց տպագրելու համար ֆինանսներ չունեմ... դիմել եմ կառավարություն եւ մշակույթի նախարարություն եւ ստացել եմ մերժում: Նրանց խնդրել էի պարտքով 1000 տպաքանակով տպագրել գիրքս, որի մեկ հատը կարժեներ 400-500 դրամ, իսկ վաճառքի ամենաէժան գինը կարժեներ 2000-2500 դրամ: Ինձ դարձյալ մերժեցին: Մինչդեռ ես 18 տարի որոշ ընդմիջումներով աշխատել եմ որպես փոստատար: Գրքի վաճառքի անխտիր բոլոր նրբություններին ծանոթ եմ: Ես այդ 1000 օրինակ 120-150 էջանոց գիրքը 3 ամսում կվաճառեմ... Ինձ մերժում են այն դեպքում, երբ հայ մարմնավաճառը նիսյա «տալիս է» արդեն ոչ թե պարսիկներին, այլ հնդիկներին:

Վերջին 7-8 ամսում դարձյալ գիրք եմ վաճառում... Ունեմ 1200-1500 մշտական ընթերցողներ... Զանգում եմ տները եւ առաջարկում եմ այդ գիրքը: Յուրաքանչյուր 10-12 զանգից մեկը կամ մի քանիսը ասում են - «Բերեք, կգնենք», իսկ երբ տանում եմ, երբեմն հրաժարվում են: Նրանք ասում են. «Դուք ինչ մարդ եք, մեզ զանգել-ասել են, թե «Նրանից գիրք մի գնեք» Եվ այլն ... Եվ այլն... Եվ այս բերդի շակալները 25 տարի այդպես փակել են իմ գոյատեւելու բոլոր վիճակները: Բայց ես չեմ ընկրկում, չեմ հանձնվում... իսկ եթե իմ գիրքը լինի ... վաճառելը ավելի հեշտ կլինի...»:

Ես Ձեզ կարող եմ տասնյակ մարդկանց անուններ տալ եւ տասնյակ դեպքեր պատմել՝ տասնյակ մարդկանց վկայություններով, թե ովքեր, ինչ պարագաներում եւ ինչպես են ինձ տանջում, եւ դա ինչպիսի մարդկանց է ձեռնտու: Սակայն, ինչպես արդեն 25 տարի ասում եմ, ես ինձ ֆիզիկական եւ հոգեկան կտտանքներ պատճառողների ամենագլխավոր մարդուն չեմ ճանաչում: Այլապես կգնայի եւ այդ մարդու լեզուն կհասկանայի: Ի միջի այլոց ասեմ, որ նա շատ գերիզոր եւ ամենակարող մարդ է, որն արդեն դուրս է եկել նույնիսկ վարչապետ Փաշինյանի վրա: Վարչապետը ինձ նկատի ունենալով մերթ ասում է «Խոզի գլուխը խալուն չի մնում»: Մերթ էլ թե «Աղքատի ըստեղը չկա: Ուզում էս միլլիոն տար, միեւնույն է աղքատ կմնա»: Մերթ դարձյալ ինձ նկատի ունենալով ասում է «Հորեղբոր տղաները տալիս են, բայց չեն ուզում ոչ ոք իմանա»: Իսկ երբ մի քանի ամիս առաջ ես թուղթ ու գրիչով գրված նամակս «Քաղ. Պայմանագիր» կուսակցության միջոցով ուղարկել էի նրան, իմ ֆոտոնկարը ծրարին կպցրած, եւ ճշմարտության տասը տոկոսն էի ասել. «Պարոն Փաշինյան, երբ մի հինգ որպե օմբուդսմեններին պատմում եմ, թե ինչպիսի գերիզոր մարդկ են իմ գոնե գոյություն քարշ տալու բոլոր վիճակները անբար կերպով փակում: Օբուդսմենները լացակումած ասում են «Դու քար էս, որ դիմանում էս: Դիմիր ոստիկանություն»: Ես օբուդսմեններին պատասխանել եմ. «Գեբելը, Գեորինգը, Գիմլերը ինձ տանջում են, իսկ դուք ինձ Հիտլերի մոտ բողոք գնալո՞ւ եք ուղարկում»:

Օբուդսմենները ծիծաղելով ասում են՝ «Փաստորեն դու ամեն ինչ գիտես»: Այդպես էի գրել վարչապետ Փաշինյանին:

Բոլորը կարծում են, թե ես ամեն ինչ գիտեմ, բայց ես չգիտեմ, թե ինչ գիտեմ:

Եվ վերջում գրել էի, թե «պարոն Փաշինյան, թախանձագին աղերսում եմ, փոխեք իմ մասին ստացած Ձեր ինֆորմացիայի աղբյուրը, եթե նույնիսկ նա Ձեր եղբայրն է, կամ գլխավոր ոստիկանապետը, կամ էլ Ձեր մանկական ընկերը, ծանոթը, խաչքավորը, կամ էլ Ձեր «քաղաքական կնքահայրը» »:

Սակայն վարչապետ Փաշինյանը լավ գիտակցելով, որ իմ մասին ճիշտ ինֆորմացիա կարող է ստանալ միայն ու միայն ինձանից, գերադասեց դարձյալ ապավինել իմ մասին ստացած իր ստից-փտից ինֆորմացիայի աղբյուրին... Ինչեւէ...

Սիրելի ընթերցող, ես մի քանի դրվագ ասացի, թե Փաշինյանն ինչպես է ակամա իմ դեմ հրահրում այն բոլոր մարդկանց, ովքեր ինձ նույնիսկ դեմքով են ճանաչում:

Եվ այդպիսով ինձ ծաղրուծանակի առարկա դարձնելով ինձ ճանաչող հարյուր հազարավոր մարդկանց աչքերին: Ասեմ եւս մեկ բան: Երբ ես 51 վայրկյանում ավելի քան 100 000 (հարյուր հազար) ունկնընդիր էի հավաքել լրագրողի հարցին պատասխանելով (քաղաքականությունը մաթեմատիկայի հետ համեմված): Հենց Փաշինյանը արմատական ընդդիմադիր պատգամավոր Ագնեսա Խամոյանին տված հարցազրույցում պարզապես քահ-քահ ծիծաղում էր իմ ասած «երկրաչափական պրոգրեսիան» վկայակոչելով :

Նա լավ գիտի, որ Երեւանի քաղաքապետարանի ընտրություններում վերեւից երրորդ-չորրորդ տեղը գրավելը ինձ համար ժամերի փոքրիկ խնդիր էր:

Դա թերեւս պատվաբեր էր, բայց իմ հնարավորությունների առաստաղը չէր:

Վերջում խորին շնորհակալություն եմ հայտնում իմ հորեղբայր տղաներին՝ Վահրիհ Գեւորգյանին, Վահրամ Վարուժանի Ադամյանին, քեռուս տղային՝ Սերգեյ Իլյիչի Մանուկյանին, հորաքրոջս տղային՝ Հարություն Մելքոնյանին, հորաքրոջս հարսին՝Նարինե Խեչոյանին՝իմ ֆիզիկական եւ ֆինանսական անվտանգության համար, N1 տուն-ինտերնատի տնօրեն Խաչիկ Ղազարյանին, փոխտնօրեններ Կոլյա Մակարյանին եւ Արամ Մկրտիչյանին, սոց. աշխատող Լյուդմիլա Վարդանյանին, բուժքույր Գոհար Եդիգարյանին, ծերանոցի իմ ընկերներին՝ Արթուր Օհանյանին, Արկադիկ Մովսիսյանին, Ռաֆայել Սիմոնյանին եւ Լազար Մանուկյանին: Շնորհակալ եմ քեռուս տղային՝ Արամ Պատվականի Վարդանյանին եւ նրա տիկնոջը՝Սուսաննա Գիլոյանին: Տարբեր տարիներին ինձ աջակցելու համար շնորհակալ եմ Նիգավանի գյուղապետ Արտաշ Գալստյանին, Ապարանի քաղաքապետ Կարեն Եղիազարյանին, փոխքաղաքապետ Արկադի Կարապետյանին եւ Գոռ Աբրահամյանին, Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանին, Նիգավանի իմ քավորներին՝ Գեւորգ եւ Սմբատ Խաչատրյաններին: Միգուցե ես միակ մարդն եմ, որ շնորհակալություն եմ հայտնում էքսպրեզիդենտ Սերժ Սարգսյանին: Երբ որ ես լքված, մենակ ու միայնակ պայքարում էի իմ ճակատագրի դեմ, այդ էքսպրեզիդենտ Սերժ Սարգսյանն էր, որի ուշադրության կենտրոնում էի: Նա էր, որ հեռուստացույցով ասաց. «Եթե մարդիկ հիվանդ են, ինչո՞ւ թոշակ չեք տալիս»: Իսկ ես մահամերձ հիվանդ էի, սակայն հիվանդանոցների միջեւ անգամ պահակները ինձ պարզապես չէին թողնում, որ մտնեի այնտեղ: Ձեզ բարի ծերություն եմ մաղթում, թանկագին Սերժ Սարգսյան: Առողջապահության նախարարության աշխատող Վահե Կորյունի Հակոբյանի գործադրած ահռելի ջանքերի շնորհիվ միայն ինձ թույլ տվեցին պառկել հիվանդանոց: Ես երկրորդ խմբի հաշմանդամ դարձա:

Շնորհակալ եմ վարչապետ Փաշինյանին, ինձ մշտապես իր ուշադրության կենտրոնում պահելու համար:

Շնորհակալ եմ նաեւ Ապարանցի Էդգար Փարվանյանին եւ լավ, ախպեր տղաներին, երկար տարիներ համբերատարորեն իմ անվտանգությունն ապահովելու համար:

Եթե ես աշխարհի թագավորը լինեի, առանց վարանելու, թագավորությանս ամբողջվին կբաժանեի վերոհիշյալ բոլոր մարդկանց միջեւ: Այդ ձեր շնորհիվ էր, սիրելիներ, որ ես մեր փոքրիկ, բայց մեծ հայրենիքի համար առանձնակի ու ընդգծված կարեւորություն ունեցող քաղաքացի դարձա: Եղբայրաբար համբուրում եմ ձեր ճակատները եւ խոստանում եմ, որ պետության լավության տակից դուրս կգամ:

Անմնացորդ սիրով եւ անշահախնդիր հարգանքներով՝ ձեր Հարութ:

● *Նոյեմբերի 11-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Օտարը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-4000 դրամ: Սկզիբը՝ ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք:**

*Գեւորգ Կիրակոսյան (51 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված, 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես է իրականացվում անվան փոխման գործընթացը:**

*Լիաննա Ղազարյան (37 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ անվան փոխման պետական գրանցման հիմքերն են՝

- տասնութ տարին լրացած անձն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը եւ ազգանունը,
- տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձն իր անվան եւ ազգանվան փոխման պետական գրանցումը կատարում է ծնողների, որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի) գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշմամբ՝ բացառությամբ նրա՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչվելու դեպքերի: Տասնվեց տարին չլրացած անձի անվան կամ ազգանվան փոխման պետական գրանցումը կատարվում է՝ ծնողների համատեղ (որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի)) դիմումի հիման վրա, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշմամբ:

Անվան փոխման պետական գրանցման դիմում կարող է ներկայացվել, եթե՝

1) ծնունդը գրանցվել կամ սույն օրենքով սահմանված կարգով վերականգնվել է Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ մարմիններում կամ Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում,

2) ծնունդը գրանցել է օտարերկրյա պետությունը, եւ Հայաստանի Հանրապետությունն իրավասու է կատարելու անվան փոխում՝ երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի հիման վրա:

*ՀՀ արդարադատության նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Իսպանացի նկարիչ Պաբլո Պիկասոյի «Ժամացույցով կինը» նկարը 139,364 մլն դոլարով վաճառվել է աճուրդում:

Կտավին պատկերված է Պիկասոյի սիրուհի Մարի Թերեզ Վալտերը՝ ձեռքի ժամացույցով: Պիկասոյի ստեղծագործությունների հետազոտող Լիդիա Գասմանը ենթադրում է, որ ժամացույցը հատուկ նշանակություն է ունեցել նկարչի համար, եւ որ այն խորհրդանշում է «ժամանակի ընթացքում մարող սեր»:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝ (060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| | Շիրակ | - 2 + 2<br>+12 + 16 |
| | Կոտայքի լեռներ | - 2 + 1<br>+11 + 16 |
| | Կոտայքի նախալեռներ | + 4 + 6<br>+16 + 18 |
| | Գեղարքունիք | - 2 + 2<br>+ 9 + 13 |
| | Լոռի | - 2 + 3<br>+12 + 15 |
| | Տավուշ | + 2 + 7<br>+13 + 17 |
| | Արագածոտնի լեռներ | - 2 + 1<br>+ 9 + 11 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 4 + 7<br>+ 14 + 18 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | + 3 + 7<br>+ 18 + 20 |
| | Արմավիր | + 2 + 5<br>+17 + 19 |
| | Վայոց ձորի լեռներ | - 1 + 1<br>+9 + 13 |
| | Վայոց ձորի նախալեռներ | + 3 + 7<br>+17 + 20 |
| | Սյունիքի հովիտներ | + 6 + 10<br>+ 17 + 21 |
| | Սյունիքի նախալեռներ | 0 + 5<br>+ 11 + 15 |
| | ԼՂՀ | + 6 + 10<br>+ 16 + 20 |
| | Երեւան | + 9 + 10<br>+ 20 + 22 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*